ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» օգոստոսի 2002թ. N 207

Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների դասակարգման (հասկացության) մասին

«Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների դասակարգումը (հասկացությունը) (կցվում է), որոնց վրա կատարված ծախսերը հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են դրանց կատարման տարվա ընթացքում ամբողջովին:

2. Սույն որոշման դրույթները տարածվում են անմիջականորեն կազմակերպության կատարած, ինչպես նաև իր կողմից պատվիրված գիտահետազոտական և փորձակոնստրուկոտրական աշխատանքների վրա:

3. Կազմակերպությունների պատվերով իրականացվող աշխատանքները գիտահետազոտական և (կամ) փորձակոնստրուկտորական համարվող ու այլ աշխատանքներ ներառելու դեպքում պայմանագրերում, սկզբնական հաշվառման (հաշվապահական) փաստաթղթերում (հաշվարկային ու այլ փաստաթղթերում)՝ աշխատանքների ու ծառայությունների ընդհանուր արժեքից պետք է առանձնացվեն գիտահետազոտական և (կամ) փորձակոնստրուկտորական համարվող աշխատանքների համար վճարվելիք (վճարման ենթակա) գումարները:

4. Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով վարվում է առանձնացված հաշվառում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
20 օգոստոսի 2002թ
թիվ 207 որոշման

Դասակարգում (հասկացություն)

գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների

1. Գիտահետազոտական աշխատանքներ են համարվում գիտական հետազոտություններն ու մշակումները, որոնք իրականացվում են ձեռքբերված գիտելիքների ընդլայնման և նոր գիտելիքների ստացման ու կիրառման նպատակով, ներառյալ՝

ա/ հիմնարար գիտական հետազոտությունները՝ բնության օրենքների, մարդու գործունեության, հասարակության կառուցվածքի և զարգացման հիմնական օրինաչափությունների մասին ունեցած գիտելիքների ընդլայնմանն ու նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված տեսական կամ փորձարարական գործունեությունը.

բ/ կիրառական գիտական հետազոտությունները՝ հիմնականում գործնական նշանակություն ունեցող, որոշակի խնդիրների լուծմանը նպատակաուղղված հետազոտությունները կամ գործնական փորձի միջոցով ձեռք բերված գիտելիքների վրա հիմնված և մարդու կյանքի ու առողջության պահպանմանը, նոր նյութերի, արտադրանքի, ծառայությունների, համակարգերի կամ մեթոդների ստեղծմանը և դրանց հետագա կատարելագործմանն ուղղված փորձարարական մշակումները:

2. Փորձակոնստրուկտորական աշխատանքներ են համարվում ինժեներական օբյեկտի կամ տեխնիկական համակարգի որոշակի կոնստրուկցիայի մշակումը, գծագրի կամ նշանային միջոցների այլ համակարգի մակարդակով նոր օբյեկտի մտահղացումների և տարբերակների մշակումը, տեխնոլոգիական պրոցեսների մշակումը, այդ թվում՝

արտադրանքի կամ տեխնոլոգիայի այլընտրանքների գնահատումը.

արտադրանքի փորձանմուշների նախագծումը, կառուցումը և փորձարկումը.

նոր տեխնոլոգիաների կիրառմամբ՝ գործիքների, ձուլամայրերի, կաղապարների և դրոշմոցների նախագծումը:

3. Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքում չեն ներառվում, մասնավորապես, գործունեության հետևյալ տեսակները՝

ա/ կրթությունը և կադրերի պատրաստումը (վերապատրաստումը),

բ/ մարքետինգային գործունեությունը,

գ/ ընդհանուր նշանակության տեղեկությունների հավաքումը և մշակումը,

դ/ ստանդարտացումը,

ե/ մասնագիտացված բժշկական ծառայությունները,

զ/ գոյություն ունեցող ծրագրային ապահովման հարմարեցումը (ադապտացումը, պահպանումը և ուղեկցումը),

է/ արտադրության պրոցեսում նորամուծությունների ներդրումը,

ը/ կառավարումը,

թ/ սոցիոլոգիական և այլ հարցումների անցկացումը, դրանց արդյունքների ամփոփումը և առաջարկությունների մշակումը, գործող օրենսդրության ու վճռակագրական տվյալների վերլուծությունը,

ժ/ ինովացիոն գործունեությունը:

ԼՂՀ կառավարության
աշխատակազմի ղեկավար Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ